ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոս, 2025 թվականի № 67-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՑԱՆՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2025 թվականի օգոստոսի 25-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N N ԼՄ-03/442/25 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված ժամանակահատվածում Ընկերությունն իրավասու է ուղիղ եթերով հեռարձակել կարևոր իրադարձությունների վերաբերյալ՝ սույն որոշմամբ հաստատված հաղորդացանցով չնախատեսված տեսալսողական հաղորդումներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

29 օգոստոս, 2025 թվականի

ք. Երևան